ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1952 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

ՍՈՒՐԵՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ*

Բոլշևիկների պարտիայի ականավոր գործիչ, պրոֆեսիոնալ ռևոլուցիոներ, բանվոր դասակարգի ազատագրման գործին մինչև վերջը նվիրված անձնվեր մարտիկ Սուրեն Սպանդարյանի ռևոլուցիոն գործունեության և հրապարակախոսական ժառանգության գիտական մեկնաբանման, նրա երկերի հրատարակման ուղղությամբ կատարված է դալլի աշխատանք։ 1939—1940 թթ. ՀԿ(բ)Պ կենտկոմին կից Պարտիայի պատմության ինստիտուտը կազմեց և հրատարակեց Սուրեն Սպանդարյանի հոդվածների, նամակների և փաստաթղթերի ժողովածուն մեկ հատորով՝ հայերեն և ռուսերեն լեզուներով։ 1949 թվականին ՀԿ(բ)Պ կենտկոմին կից Պարտիայի պատմության ինստիտուտի—ՀամԿ(բ)Պ կենտկոմին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի ինստիտուտի հայկական ֆիլիալի կողմից հրատարակվեց դրականության, արվեստի, կուլտուրայի և կրթության մասին Ս. Սպանդարյանի գրած հոդվածների ժողովածուն։ 1945 թվականին Երևանում ռուսերեն լեզվով հրատարակվեց ընկ. Վարդան Ավետիսյանի «Սուրեն Սպանդարյան» աշխատությունը, որը ջերմ ընդունելություն գտավ լայն հասարակայնության ու մամուլի կողմից։

Ընկ. Վ. Ավետիսյանի նոր գիրքը Սուրեն Սպանդարյանի մասին, հանդիսանում է 1945 թվականին ռուսերեն լեզվով լույս տեսած աշխատության ուղղված և լրացված հայերեն հրատարակությունը։

Սպանդարյանին նվիրված սույն մենագրության առաջին էջերում հեղինակը պատմում է ապագա մեծ ռևոլուցիոների մանկության և պատանեկության տարիների մասին։

Սպանդարյանի կյանքի այդ տարիները, ինչպես Ռուսաստանում, այնպես և Անդրկովկասում արդյունաբերական կապիտալիզմի զարգացման, բանվորական շարժման աճման, մարքսիզմի լայն տարածման տարիներն էին։ Ռուսաստանի պրոլետարիատը ռևոլուցիոն պայքարի էր դուրս եկել ցարական ինքնակալության դեմ։ Ռուսաստանում ծավալվող բանվորական շարժումը խոր արձագանք էր գտնում նաև Կովկասում, որտեղ ուժեղ էր ցարիզմի ազգային-գաղութային ճնշումը։

Ռուսաստանում բանվորական ռևոլուցիոն շարժման գլուխ էր կանգնած Մարքսի և Էնգելսի գործի շարունակողը՝ մեծ Լենինը։ Պրոլետարական բոլոր կենտրոններում ստեղծվել էին սոցիալ-դեմոկրատական մարքսիստական կազմակերպություններ։ Վ. Ի. Լենինը կառուցում էր բանվոր դասակարգի մարքսիստական պարտիան, իրականացնում էր սոցիալիզմի միացումը բանվորական շարժման հետ։

«Սոցիալ-դեմոկրատական շարժումը,—գրում էր 1901 թվականին ընկեր Ստալինը,—չթողեց երկրի չշոշափված և ոչ մի անկյուն։ Նրանից չխուսափեց Ռուսաստանի նաև այն անկյունը, որը մենք Կովկաս ենք անվանում, իսկ Կովկասի հետ միասին նրանից չխուսափեց նաև մեր Վրաստանը»[1]։

1898—1900 թվականներին առաջ եկավ և ձևավորվեց Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավար կենտրոնական խումբը՝ ընկեր Ստալինի գլխավորությամբ։

«Թիֆլիսի կենտրոնական պարտիական խումբը,—գրում է ընկեր Բերիան,—ռևոլուցիոն սոցիալ-դեմոկրատիայի գաղափարները պրոպագանդելուն զուգընթաց, ղեկավարում էր Թիֆլիսի պրոլետարիատի գործադուլներն ու քաղաքական պայքարը»[2]։

---

* Վ. Ավետիսյան—Սուրեն Սպանդարյան, ՀամԿ(բ)Պ կենտկոմին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի ինստիտուտի հայկական ֆիլիալ. Հայպետհրատ, 1951, էջ 290։

1 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 1, էջ 3—4։

2 Լ. Պ. Բերիա, «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը», էջ 23, Հայպետհրատ, 1945։

Ռուսաստանում, Անդրկովկասում և, մասնավորապես, Թիֆլիսում ծավալվող ռևոլուցիոն շարժումները խոր ազդեցություն են ունենում Սուրեն Սպանդարյանի վրա և որոշում են նրա հասարակական-քաղաքական գործունեության ուղղությունը։ Գիմնազիայի վերջին դասարանում նա արդեն ակտիվ կերպով մասնակցում է սոցիալ-դեմոկրատական աշակերտական խմբակներին, կապվում Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական միջավայրի հետ, ձեռք է բերում և կարդում անլեգալ մարքսիստական գրականություն։

1902 թվականին Սպանդարյանը արդեն ընկեր Ստալինի ղեկավարած Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական լենինյան-իսկրայական ուղղության կազմակերպության անդամ էր։

Այդ ժամանակաշրջանին է վերաբերում Սպանդարյանի անձնական ծանոթությունը Վ. Ի. Լենինի ամենամերձավոր զինակցի՝ Ի. Վ. Ստալինի հետ։ Այդ ծանոթությունը պատմական խոշոր իրադարձություն էր Սպանդարյանի կյանքում։ «Այդ ծանոթությունը,—գրում է ընկ. Ավետիսյանը,—հետագայում, համատեղ աշխատանքում ու պայքարում վերածվեց սերտ բարեկամության և խոր կնիք դրեց Սպանդարյանի ամբողջ ռևոլուցիոն գործունեության վրա։ Սպանդարյանը դարձավ ընկեր Ստալինի մարտական զինակիցներից մեկը, մինչև վերջը նվիրված Լենինի—Ստալինի վեհ գործին» (էջ 18—19)։

Ավարտելով գիմնազիան, 1902 թվականին Սպանդարյանը մեկնում է Մոսկվա՝ ուսումը շարունակելու։ Մոսկվայի համալսարանի պատմա-ֆիլոլոգիական, ապա իրավաբանական ֆակուլտետի ուսանող Սպանդարյանի վրա մեծ ազդեցություն է ունենում Ռուսաստանի բանվորական շարժման խոշորագույն կենտրոններից մեկի՝ սոցիալ-դեմոկրատական լենինյան-իսկրայական կազմակերպությունների գործունեությունը։ Սպանդարյանն այստեղ ոչ միայն տեսական-մարքսիստական խոշոր պատրաստություն է ձեռք բերում, այլև դառնում է ռևոլուցիոն պրակտիկ աշխատանքի լավագույն գործիչ։

Վ. Ավետիսյանը փաստական հարուստ նյութի հիման վրա ցույց է տալիս Ս. Սպանդարյանի եռանդուն գործունեությունը Մոսկվայում՝ պարտիայի երկրորդ համագումարից հետո, երբ նա իրեն հատուկ կրքոտությամբ պայքարում է մենշևիկների պառակտիչ գործունեության դեմ։ Նա շուտով դառնում է Մոսկվայի բոլշևիկյան կազմակերպության աչքի ընկնող անդամներից մեկը, Մոսկվայի կոմիտեի ղեկավարների հետ միասին եռանդուն աշխատանք է ծավալում կենսագործելու համար Լենինի դիրեկտիվները՝ պարտիայի 3-րդ համագումար հրավիրելու, պարտիական մամուլ ստեղծելու, մենշևիկներին բանվոր դասակարգից մեկուսացնելու վերաբերյալ։

Սպանդարյանը դառնում է 1904 թ. աշնանը Մոսկվայում կազմակերպված ուսանողական հուժկու ցույցերի նախաձեռնողներից մեկը և ցուցարարների առաջին շարքում կռվում է ցարական ոստիկանության դեմ։

Պարտիայի հանձնարարությամբ Սպանդարյանը եռանդուն գործունեություն է ծավալում 1905 թվականին։ Նա Մոսկվայի դեկտեմբերյան զինված ապստամբության օրերին զենքը ձեռքին, Կրասնայա Պրեսնյայի բարիկադների վրա կռվում է բանվոր դասակարգի ազատության համար։ Ռևոլուցիայի լավագույն գործիչներից շատերը հերոսի մահով ընկնում են բարիկադների վրա։ Ընկնում է նաև Սպանդարյանի մոտ ընկեր բանվոր Տիմոֆեյը։ Սիրելի ընկերոջ դիակի առջև Սուրենը երդվում է իր սրտում հավերժ պահել ազատության ազնիվ մարտիկի պատկերը և, ի նշան Տիմոֆեյի հիշատակի, ընդունում է նրա անունը։ Այդ օրվանից Սպանդարյանը պարտիական շրջանում, որպես պրոֆեսիոնալ ռևոլուցիոներ հայտնի է դառնում «Տիմոֆեյ» անունով[1]։ Անհասկանալի է, թե ինչու ընկ. Վ. Ավետիսյանը այս հուզիչ դեպքի պատմությունը դուրս է ղցել վերամշակված մենագրությունից։

1905 թվականի սկզբներին Սպանդարյանը որպես ռևոլուցիոն շարժումների մասնակից, վտարվում է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի երրորդ կուրսից և հարկադրված՝ թողնում է Մոսկվան ու վերադառնում Թիֆլիս։

Տեսական խոր պատրաստությունը, բոլշևիկյան սկզբունքայնությունը, հռետորական փայլուն տաղանդը, աշխատանքում ցուցաբերած ռևոլուցիոն կիրքն ու թափը,—այս բոլորը պրոֆեսիոնալ ռևոլուցիոներ Սպանդարյանին դարձնում են Անդրկովկասի մասշտաբով աչքի ընկնող պարտիական գործիչ։ Նա դառնում է ընկեր Ստալինի մերձավոր զինակիցներից մեկը։

---

[1] В. Аветисян, Сурен Спандарян, стр. 18, Армгиз, 1945.

Թիֆլիսում Սպանդարյանը ամբողջովին նվիրվում է պարտիական աշխատանքին։ Ընկեր Ստալինի անմիջական ղեկավարությամբ և հանձնարարությամբ նա եռանդուն աշխատանք է ծավալում բանվորների մեջ, պրոֆմիություններում, գործադուրկների շրջանում և այլն։ Միաժամանակ, Կովկասյան բոլշևիկյան կենտրոնի հանձնարարությամբ, ականավոր ռևոլուցիոներ Ստեփան Շահումյանի հետ միասին լայն աշխատանք է ծավալում հայ բանվորների մեջ, նրանց հասցնելով Լենինի—Ստալինի դաղափարները, կազմակերպում է բանվորների ռևոլուցիոն պայքարը ցարիզմի դեմ, հայ կալվածատերերի, բուրժուազիայի և նրանց վարձկան նացիոնալիստական պարտիաների դեմ, դաստիարակում է հայ աշխատավորությանը ինտերնացիոնալիզմի ոգով, Ռուսաստանի բոլոր ազգերի աշխատավորների համերաշխության ոգով։

Հայ աշխատավոր մասսաների ռևոլուցիոն դաստիարակությանն գործը հաջողությամբ առաջ տանելու նպատակով, ընկեր Ստալինի առաջադրանքով, Սուրեն Սպանդարյանը և Ստեփան Շահումյանը ձեռնարկում են հայերեն լեգալ բոլշևիկյան մամուլի ստեղծման գործին։ Նրանց հաջողվում է 1906 թ. մարտին Թիֆլիսում հրատարակել հայերեն «Կայծ» բոլշևիկյան լեգալ երկօրյա թերթը։

Ընկ. Վ. Ավետիսյանը մանրամասնությամբ ուսումնասիրելով Սպանդարյանի այդ շրջանում գրած աշխատությունները, ցույց է տալիս բոլշևիկ ժուռնալիստի, կրակոտ հրապարակախոսի փայլուն տաղանդը։ Բոլշևիկյան պարտիայի իդեոլոգիական, կազմակերպական-տակտիկական և թեորիական դրույթների պաշտպանությանը նվիրված հոդվածներում Սպանդարյանը համարձակ ու անվեհեր մերկացնում էր ցարական ինքնակալական կարգերը, բուրժուական ու նացիոնալիստական պարտիաների կոնտրռևոլուցիոն էությունը, մենշևիկների օպորտունիզմն ու դավաճանությունը ռևոլուցիայի գործին։

«Սուրեն Սպանդարյան» աշխատության բազմաթիվ էջեր նվիրված են Սպանդարյանի անողոք պայքարին՝ նացիոնալիզմի դեմ, հատկապես ամեն դույնի ու երանգի հայկական նացիոնալիստների դեմ՝ «մշակականների», «դաշնակցականների», «սպեցիֆիկների», «հնչակյանների» և ուրիշների դեմ։

Ընկեր Ստալինն այդ պայքարի կարևորության մասին գրել է. «Կովկասյան սոցիալ-դեմոկրատիան աճել է նացիոնալիզմի դեմ մղած պայքարում։ Վրացական սոցիալ-դեմոկրատները պայքարել են «ներսից» նացիոնալիստների, նացիոնալ-դեմոկրատների և ֆեդերալիստների դեմ, հայ սոցիալ-դեմոկրատներն՝ «իրենց» դաշնակցականների դեմ, մուսուլմանները՝ պանիսլամիստների դեմ։ Եվ դրանց դեմ մղած պայքարում իր կազմակերպություններն ընդլայնել ու ամրացրել է Կովկասյան սոցիալ-դեմոկրատիան»[1]։

Սպանդարյանը առանձնապես սուր պայքար է ծավալում «դաշնակցություն» բուրժուա-նացիոնալիստական պարտիայի դեմ, որը հանդիսանում է հայ պրոլետարիատի, հայ աշխատավոր ժողովրդի ոխերիմ և վտանգավոր թշնամին։ Սպանդարյանը բոլշևիկյան կըրքոտությամբ ու բուռն ատելությամբ հանդես գալով դաշնակների դեմ, քայլ առ քայլ մերկացնում է նրանց բուրժուական, շովինիստական կոնտրռևոլուցիոն, սև հարյուրակային զազրելի էությունը, դաշնակներին անվանելով «հայ կյանքի ցեցեր», «հայ բանվոր դասակարգի դիտակցությունը բթացնողներ», «հայ գյուղացիությանը ամենաանամոթ կերպով հարստահարողներ ու կեղեքողներ»։

«Դաշնակցությունը» դյուտ հանդիսացավ արևմտա-եվրոպական իմպերիալիստական պետությունների համար և դարձավ նրանց հավատարիմ սպասավորը, նրանց իմպերիալիստական քաղաքականության գործակալներից մեկը Մերձավոր Արևելքում»,— դիպուկ կերպով նկատում է ընկ. Վ. Ավետիսյանը (էջ 66)։

«Պայքարելով դաշնակների և մյուս նացիոնալիստական պարտիաների դեմ, որոնք կողմնորոշվում էին դեպի Արևմուտքի իմպերիալիստական ուժերը և ջանում էին հայ ժողովրդին անջատել ռևոլուցիոն Ռուսաստանից, Սպանդարյանը անդադրում պրոպագանդում էր այն միակ ճշմարիտ իդեան, որ հայ ժողովրդի, ինչպես և Ռուսաստանի բոլոր մյուս ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարի շահերը համընկնում են ռուսաստանյան պրոլետարիատի դեմոկրատական և սոցիալիստական շարժման հետ և այդ շարժման հաղթանակը միայն ռեալ պայմաններ կստեղծի ճնշված ազգերի ազատագրման և ազգային վերածննդի համար։ Ուստի ոչ թե պետք է անջատվել Ռուսաստանից, ռուսական պրոլե-

---

1 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 2-րդ, էջ 336։

տարիատից, այլ ավելի ևս մերձենալ նրան և միացյալ ուժերով պայքարել ցարիզմի ու կապիտալիզմի դեմ» (էջ 73—74)։

Հեղինակը հետաքրքիր փաստեր է հրապարակում Ս. Սպանդարյանի և Ս. Շահումյանի գործունեության մասին՝ Ալավերդու պղնձահանքերի բանվորների շրջանում և Լոռու գյուղացիության մեջ։ Ուշագրավ են այն էջերը, որոնք նվիրված են Ալավերդու հանքագործների 1906 թ. օգոստոսյան գործադուլին։ Այդ գործադուլը Անդրկովկասյան բոլշևիկյան կենտրոնի հանձնարարությամբ ղեկավարում էին Ս. Շահումյանը և Ս. Սպանդարյանը։

Իրավացիորեն Վ. Ավետիսյանն իր աշխատության մեջ համեմատաբար ավելի մեծ տեղ է հատկացրել Ս. Սպանդարյանի ռևոլուցիոն գործունեությանը Բաքվում։ 1907 թ. հունվարին նա Կովկասյան բոլշևիկյան կենտրոնի առաջադրանքով փոխադրվում է Բաքու՝ պարտիական անլեգալ աշխատանքի։

«1907—1912 թթ. ժամանակաշրջանում,— գրում է Լ. Պ. Բերիան,— ընկեր Ստալինի ղեկավարությամբ, մենշևիկների դեմ մղվող պայքարում աճեց, ամրացավ ու կոփվեց Բաքվի բոլշևիկյան պարտիական կազմակերպությունը, իր կողմը նվաճելով սոցիալ-դեմոկրատական բանվորների ճնշող մեծամասնությունը։ Բոլոր բանվորական ռայոնները (Բալախանի, Սուրախանի, Ռոմանի, Բիբի-Էյբաթ, Սև քաղաք, Սպիտակ քաղաք, Երկաթուղի և այլն) բոլշևիկների ձեռքին էին։

Բաքուն դարձավ Անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների պատվարը, լենինյան պարտիայի անխորտակելի ամրոցը»[1]։

Ս. Սպանդարյանը նշանակվում է Բաքվի նավթարդյունաբերական խոշոր ռայոններից մեկի՝ Սև-քաղաքի պարտիական կազմակերպիչ և անդուլ կերպով աշխատում է իր ագործել ընկեր Ստալինի ցուցումները՝ ջախջախել մենշևիկներին և նվաճել Բաքվի բանվորներին բոլշևիկների կողմը։ Այդ պայքարում Սպանդարյանն աճեց և կոփվեց և՛ որպես ռևոլուցիոն պրակտիկ գործիչ, և՛ որպես պրոպագանդիստ, հրապարակախոս, տեսաբան։

Ռուսաստանում մոլեգնող ռեակցիայի պայմաններում Ս. Սպանդարյանը մեծ հաջողությամբ իրականացնում է Լենինի և Ստալինի ցուցումներն ընդհատակ անցնելու, անլեգալ պարտիական կազմակերպությունը պահպանելու և ամրացնելու, լեգալ հնարավորությունները օգտագործելու, բանվորական մասսայական կազմակերպություններում բոլշևիկյան պրոպագանդա կազմակերպելու՝ մասսաներին ռևոլուցիոն նոր վերելքի նախապատրաստելու մասին։ Նա ամենաակտիվ մասնակցություն է ունենում ընկեր Ստալինի ղեկավարությամբ լույս տեսնող „Бакинский пролетарий", „Бакинский рабочий", „Гудок" բոլշևիկյան մարտական օրգանների գործունեությանը։ Նա այդ շրջանում հրապարակում է մի շարք տեսական հոդվածներ՝ պատմական մատերիալիզմի, գրականության, արվեստի, կուլտուրայի հարցերի վերաբերյալ։

Ս. Սպանդարյանի անձնազոհ գործունեությունը Բաքվում տևում է մինչև 1909 թ. ապրիլի վերջը, երբ նա ձերբակալվում է։ Մեկ ամիս բանտում մնալուց հետո ազատ է արձակվում, բայց օգոստոսի վերջերին նորից է ձերբակալվում և մինչև նույն տարվա վերջը Բաքվի բանտում մնալուց հետո վարչական կարգով աքսորվում է Բաքվից։

1910 թ. հունվարին Ս. Սպանդարյանը անլեգալ կերպով գալիս է Թիֆլիս՝ կատարելու ընկեր Ստալինի հանձնարարությունը՝ վերականգնելու և ամրապնդելու Թիֆլիսի անլեգալ բոլշևիկյան կազմակերպությունը, մերկացնելու և ջախջախելու բանվոր դասակարգի դավաճաններին՝ մենշևիկ լիկվիդատորներին, տրոցկիստներին, որոնք այդ ժամանակ իրենց ձեռքն էին գցել ՌՍԴԲՊ Կովկասյան Մարգային Կոմիտեն։ Սպանդարյանը կարողանում է վերականգնել կազմակերպությունը և ձևավորել Թիֆլիսի բոլշևիկյան խումբը և Բաքվի բոլշևիկների հետ միասին կատաղի պայքար ծավալել լիկվիդատորների դեմ։

Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ 1911 թ. հուլիսին Թիֆլիս է գալիս Ս. Օրջոնիկիձեն, որը Ս. Սպանդարյանի և Ս. Շահումյանի հետ միասին սկսում է նախապատրաստական աշխատանքներ կատարել՝ համապարտիական կոնֆերենցիա հրավիրելու համար։ Նրանց հաջողվեց Բաքվում հրավիրել Ռուսաստանի խոշորագույն կազմակերպությունների

---

[1] Լ. Պ. Բերիա, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը, էջ 159, Հայպետհրատ, 1945։

ներկայացուցիչների խորհրդակցություն և կազմել համապարտիական կոնֆերենցիայի հրավիրման Ռուսաստանյան կազմակերպական հանձնաժողով (ՌԿՀ)։ Որպես ՌԿՀ-ի անդամ, Ս. Սպանդարյանին հանձնարարվում է շրջագայել Ռուսաստանի մի շարք բանվորական կենտրոններ՝ նախապատրաստելու և ղեկավարելու համար դելեգատների ընտրությունը և ուղարկումը համապարտիական կոնֆերենցիային, որը դումարվելու էր արտասահմանում։ Նա լինում է Մոսկվայում, Պետերբուրգում, Ռիգայում և այլն։

Պրագայի կոնֆերենցիայի նախապատրաստման ժամանակ Ս. Սպանդարյանը դառնում է համառուսական մասշտաբի պարտիական ակտիվ գործիչ։ Նա Բաքվի բոլշևիկների կողմից ընտրվում է Պրագայի կոնֆերենցիայի պատգամավոր։ Պրագայում Սպանդարյանը հանդիպում է Վ. Ի. Լենինի հետ։ Միջազգային պրոլետարիատի մեծ առաջնորդը բարձր է գնահատում Սպանդարյանի բոլշևիկյան սկզբունքայնությունը և նվիրվածությունը պարտիային, բանվոր դասակարգին։ Շատ շուտով Լենինի և Սպանդարյանի միջև ջերմ մտերմական հարաբերություններ են հաստատվում։

Պրագայի կոնֆերենցիան ընտրում է բոլշևիկյան պարտիայի Կենտրոնական կոմիտե՝ Լենինի և Ստալինի գլխավորությամբ։ Պարտիայի Կենտրոնական կոմիտեի անդամ է ընտրվում նաև Ս. Սպանդարյանը։ Ռուսաստանում ռևոլուցիոն աշխատանքը ղեկավարելու համար կոնֆերենցիան ընտրում է պրակտիկ կենտրոն՝ Կենտկոմի ռուսական բյուրո՝ ընկեր Ստալինի գլխավորությամբ։ Ս. Սպանդարյանը որպես Կենտկոմի ռուսական բյուրոյի անդամ, վերադառնում է Ռուսաստան և արդյունաբերական խոշոր կենտրոններում սկսում լայնորեն մասսայականացնել Պրագայի կոնֆերենցիայի որոշումները։ Ի. Վ. Ստալինի, նրա հավատարիմ զինակիցներ Օրջոնիկիձեի, Սպանդարյանի և Կենտկոմի մյուս անդամների ու Պրագայի կոնֆերենցիայի դելեգատների գործունեությունը մեծ վերելք ստեղծեց պարտիական աշխատանքի մեջ ամբողջ Ռուսաստանում և Անդրկովկասում։

Այս եռանդուն գործունեության ժամանակ է, որ, ի թիվս շատ պարտիական գործիչների, ձերբակալվում է նաև Սուրեն Սպանդարյանը։

Ընկ. Վ. Ավետիսյանը բարեխղճությամբ ուսումնասիրել է Ս. Սպանդարյանի գրական ժառանգությունը։ Աշխատության բազմաթիվ էջերում ցույց է տրված, թե ինչպես Սպանդարյանի հրապարակախոսական բեղմնավոր գործունեությունը կազմում է նրա պարտիական աշխատանքի կարևորագույն մասը։ Ռեակցիայի մոլեգնող ցենզուրայի պայմաններում նրան հաջողվում է փայլուն կերպով օգտագործել լեգալ մամուլի էջերը և բոլշևիզմի սկզբունքային դիրքերից գաղափարական անհաշտ պայքար մղել ինչպես սև-հարյուրակային, կադետական-միապետական, բուրժուա-նացիոնալիստական, այնպես և մանր-բուրժուական ու օպորտունիստական ամեն դույնի գաղափարախոսության դեմ։ Սպանդարյանի հոդվածները իրենց ռևոլուցիոն նպատակասլացությամբ մոբիլիզացնում էին բանվոր դասակարգին և բոլոր աշխատավորներին՝ պայքարելու ցարական ինքնակալության դեմ, օգնում էին մասսաներին նոր ռևոլուցիոն վերելքի նախապատրաստման գործին։

Ժուռնալիստի փայլուն տաղանդը, բազմակողմանի զարգացումը Սպանդարյանին հնարավորություն էին տալիս արձագանքել ժամանակի հասարակական-քաղաքական բոլոր աչքի ընկնող երևույթներին։ Նրա հոդվածներում և ակնարկներում իրենց արտահայտությունն էին գտնում Ռուսաստանի քաղաքական, տնտեսական կյանքի, մամուլի, դրականության, դպրոցի ու ժողովրդական կրթության, թատրոնի և կուլտուր-լուսավորական աշխատանքի հարցերը։ Այսպիսի բազմապիսի հարցերին նվիրված հոդվածներում նա կոչ էր անում տեղի չտալ ռևոլուցիայի ժամանակավոր նահանջի հետևանքով գլուխ բարձրացրած ռեակցիայի առաջ, չենթարկվել միստիկայի, պոռնոգրաֆիայի, անկումայնության, չենթարկվել ռենեգատության ճահիճը գլորված գաղափարազուրկ ինտելիգենցիայի և ռևոլուցիայից վախեցած ամեն տեսակ օպորտունիստների ապականիչ քարոզներին, այլ գնալ ժողովրդի մեջ, կապվել աշխատավորության հետ, գործով ու կենդանի խոսքով քաղաքականապես լուսավորել մասսաներին, դաստիարակել նրանց ռևոլուցիոն խանդավառությամբ, չվախենալ դժվարություններից, չխորշել առօրյա սև աշխատանքից, չխուսափել աշխատավորության հուզող խնդիրներից, ելք որոնել և ուղիներ նշել պրոլետարական պայքարի հաղթանակի համար։

Սպանդարյանը շեշտակի, անողոք հարվածներ էր հասցնում հայկական բուրժուանացիոնալիստական ու կղերական մամուլին, մասնավորապես դաշնակցական մամուլին,

որը, վայելելով ցարիզմի ակնհայտնի հովանավորությունը, հայ իրականության մեջ տարածում էր ամենառեակցիոն գաղափարները, մոլի շովինիզմ։

Ս. Սպանդարյանն Անդրկովկասի բարդ իրադրության պայմաններում փայլուն կերպով կենսագործում է Լենինի ու Ստալինի մարտական ցուցումները՝ նացիոնալիզմի դեմ անողոք պայքար մղելու մասին։ Ռեակցիայի տարիներին բուրժուական նացիոնալիզմի դեմ Սպանդարյանի մղած անհաշտ պայքարը մեծապես նպաստեց Անդրկովկասի աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակությանն ու համախմբմանը, որը ինքնակալության և կապիտալիզմի լծից նրանց ազատագրության կարևորագույն պայմաններից մեկն էր։

Ռեակցիայի տարիներին՝ ամին կարգի ու գույնի ռեակցիոներները, ցարական դահիճների հետ միասին, սև հարյուրակային արշավանք էին սկսել առաջավոր գիտության, գրականության, արվեստի դեմ, մասնավորապես, ռուսական առաջավոր և ռևոլուցիոն-դեմոկրատական գրականության դեմ։ Նրանք աշխատում էին ոտնատակ անել ռուսական առաջավոր գրականության՝ Պուշկինի, Նեկրասովի, Բելինսկու, Գերցենի, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Սալտիկով-Շչեդրինի և մյուսների ստեղծած գրականության անմահ տրադիցիաները, փականքի տակ դնել Լ. Տոլստոյի, Ա. Չեխովի, պրոլետարական մեծ գրող Մ. Գորկու երկերը, իսկ դրանց փոխարեն արմատավորելով սև հարյուրակային «գրականությունը», արտասահմանյան բուրժուական, դեկադենտական հակաժողովրդական նեխված արվեստը։ Եվ այդ ամենը կատարվում էր արվեստի «վերադասակարգայնության», «կոսմոպոլիտիզմի», «անպարտիականության», «արվեստը արվեստի» համար լոզունգներով։

Լենինը և Ստալինը համառ պայքար էին մղում ռուսական առաջավոր գիտության, գրականության ու արվեստի համար։ Նրանք բոլշևիկյան կարող ուժերին մոբիլիզացնում էին ռեակցիային հակահարված տալու համար՝ նաև իդեոլոգիայի այս ճակատում։

Աշխատության մեջ հաջող կերպով ցույց է տրված, թե ինչպես Սպանդարյանը մեծ վարպետությամբ կատարում էր պարտիայի այս պահանջը։ Նրա այդ տարիների հրապարակախոսության մեջ մեծ տեղ են բռնում գրականության, արվեստի, թատրոնի և կրթության հարցերը։

Ընկ. Ավետիսյանը մանրամասն վերլուծության է ենթարկում գրականության ու արվեստի վերաբերյալ Սպանդարյանի հոդվածները և գալիս է հետևյալ եզրակացության. «Գրականության և թատրոնի հարցերի մասին Ս. Սպանդարյանի հոդվածները արժեքավոր ներդրում են մարքսիստական լենինյան էսթետիկայի դանձարանում» (էջ 176)։

1912 թ. մայիս ամսին Սպանդարյանին հինգերորդ անգամ ձերբակալում են։ Ցարական կառավարությունը պատրաստվում է դաժան հաշվեհարդար տեսնել աննկուն ռևոլուցիոների հետ։ Թիֆլիսի Մետեխի մոայլ բանտում երկարատև տանջանքների և խոշտանգումների ենթարկվելուց հետո, 1913 թվականի սեպտեմբերին նա շղթայակապ աքսորվում է Սիբիր։

Վ. Ավետիսյանի աշխատության վերջին գլուխը նվիրված է Ս. Սպանդարյանի կյանքի վերջին տարիներին։ Հուզիչ փաստերով նկարագրված են ցարական դահիճների կողմից գործ դրված ամենաստոր միջոցները, որոնք, սակայն, երբեք չեն ընկճում անվեհեր բոլշևիկի աննկուն կամքը, նրա վառ հավատը պրոլետարական ռևոլուցիայի հաղթանակի նկատմամբ։

Չնայած ժանդարմական մշտական հսկողությանը, Սպանդարյանը բոլոր հնարագիտությունները գործադրում է աքսորում պարտիական աշխատանք ծավալելու համար, շրջում է հարևան գյուղերը, հավաքում աքսորական ընկերներին և նրանց պատմում Պրագայի կոնֆերենցիայի որոշումների, Ռուսաստանում սկսված բանվորական շարժման վերելքի, Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի գործունեության մասին։ 1914 թ. մայիսի 1-ին Սպանդարյանն իր մոտ է հավաքում հարևան 17 աքսորական ռևոլուցիոներներին և տոնում է պրոլետարիատի մեծ տոնը։

1914 թ. գարնանը ցարական կառավարությունը արտասահմանից տեղեկություն է ստանում, որ Վ. Ի. Լենինը նախապատրաստում է պարտիայի կենտկոմի անդամներ՝ Ստալինի, Սվերդլովի և Սպանդարյանի փախուստը։ Սպանդարյանին նորից ձերբակալում են և էտապով աքսորում ավելի հյուսիս՝ բևեռային շրջագծի մոտ Տուրուխանյան երկրամաս, ուր արդեն աքսորված էին Ստալինը և Սվերդլովը։ Սպանդարյանի ընակության վայրը որոշվում է երկաթուղու գծից հազար հինգ հարյուր կիլոմետր հեռու, գալանարնակ, անծայրածիր տայգաներով շրջապատված, աշխարհից կտրված Մոնաստիրսկոյե գյուղը։

Հասնելով Մոնաստիրսկոյե, Սպանդարյանը նախ և առաջ հետաքրքրվում է իր դեկավարի, մտերիմ բարեկամի և ընկերոջ՝ Ստալինի վիճակով և իր կնոջը հայտնում. «Սոսոն այստեղ է, ինձանից 175 վերստ հեռու»։

Ընկեր Ստալինը գտնվում էր Կուրեյկա խուլ կայանում, որը բևեռային շրջագծից 80 կիլոմետր հյուսիս էր։ Այստեղից ընկեր Ստալինը կապ էր հաստատել Ռուսաստանի բոլշևիկյան կազմակերպությունների և Արտասահմանյան բոլշևիկյան կենտրոնի հետ, Լենինի հետ։ Այստեղ ընկեր Ստալինը իր շուրջը համախմբելով կենտկոմի և Ռուսական բյուրոյի՝ Սիբիր աքսորված անդամներին, ծավալում է պարտիական, քաղաքական ղեկավար աշխատանք։

Վ. Ավետիսյանն իր աշխատությունում օգտագործելով հին բոլշևիկուհի Վերա Շվեյցերի այնչափ արժեքավոր հիշողությունները[1], մանրամասն պատմում է ընկեր Ստալինի և Սուրեն Սպանդարյանի մեծ բարեկամության մասին։ Չնայած ժանդարմների հսկողությանը և ճանապարհների հեռավորությանն ու դժվարությանը, հաճախ Մոնաստիրսկոյե էր գալիս ընկեր Ստալինը՝ հանդիպելու ընկերներին, խորհրդակցելու նրանց հետ, հրահանգելու նրանց՝ քաղաքական-տակտիկական հարցերում։ Ամեն անգամ Մոնաստիրսկոյե գալիս ընկեր Ստալինը իջևանում էր Սպանդարյանի մոտ։ Նրանք միասին քննարկում էին պարտիական կյանքի և Ռուսաստանի իրադարձությունների բոլոր հարցերը։

Վ. Ավետիսյանին հաջողվել է ցույց տալ Սպանդարյանի բազմակողմանի կերպարը։ Նա ոչ միայն աննկուն բոլշևիկ է, անձնվեր ռևոլուցիոներ, այլև ընտանիքի գուրգուրող հայր, ջերմ բարեկամ։ Նա գրում է ամենաջերմ նամակներ իր կնոջը, երեխաներին, հեռու Հյուսիսում հոգում է նրանց մասին, խորհուրդներ է տալիս, ղեկավարում է երեխաների ուսման և դաստիարակության գործը։ Բևեռային խավարը չի խանգարում նրան՝ ձմռանը սահնակով մեկնել դեպի հյուսիս ընկեր Ստալինի հետ հանդիպելու։ Նրանք միասին, ջերմ սիրով և մեծ երախտագիտությամբ լցված նամակ են գրում Վ. Ի. Լենինին։

Տուրուխանյան աքսորում Սպանդարյանը շատ մեծ գրկանքներ է կրում, աքսորի դժնդակ պայմանները բոլորովին քայքայում են նրա առողջությունը և նա ծանր հիվանդանում է։ Սպանդարյանի հիվանդությունը խիստ անհանգստացնում է ընկեր Ստալինին։ Նա 1916 թ. մարտին նորից է գալիս Մոնաստիրսկոյե և աշխատում, ինչ գնով էլ լինի, Սպանդարյանին տեղափոխել քաղաք՝ բժշկական օգնություն հասցնելու նպատակով։

Ցարական գահիճները երկար ժամանակ ձգձգում են Սպանդարյանին բժշկական օգնության համար քաղաք տեղափոխելու հարցի լուծումը, թողնելով որ նրա հիվանդությունը ավելի սաստկանա, որպեսզի նա հոգեպես ընկճվի, կորցնի արիությունը. բայց իզուր են անցնում ցարական սատրապների ջանքերը։ Սպանդարյանը չի կորցնում իր ոգու արիությունը, ապրում է վերահաս ռևոլուցիայի կյանքով։ Գամված անկողնին, 1916 թ. մայիսի 28-ին նամակ է գրում Լենինին և Կրուպսկայային. «Թանկագին ընկերներ։ Ձեզ ամենարոցավառ ողջույն ենք հղում մեր սառն երկրներից։ Մենք ոգով արի ենք և նույնն ենք ցանկանում Ձեզ»։

Սպանդարյանի կյանքի վերջին օրերի մասին հետևյալն է հիշում Վ. Լ. Շվեյցերը, որին ժամանակավորապես թույլատրված էր ուղեկցել Սպանդարյանին՝ Կրասնոյարսկ։

«Սուրենը մահանում էր... հարկ եղավ նրան փոխադրել Կրասնոյարսկ՝ հիվանդանոց։ Բայց մահանալիս էլ նա մտածում էր միշտ այն մասին, ինչին տվել էր իր սքանչելի կյանքն առանց մնացորդի։ Նա խնդրում էր ինձ գրել Ստալինին, որ ռևոլուցիան Ռուսաստանում արդեն հասունացել է, որ ցարական բանակը արդեն քայքայվել է, որ «ռևոլուցիան կանգնած է 17 թվի շեմքին...»։ Այդ միտքը ազատ չէր թողնում նրան։ ...Հոգեվարքի ժամին զառացանքի մեջ նա կրկնում էր—«Կանգնեցեք Լենինի դրոշի տակ» (էջ 255)։

1916 թ. սեպտեմբերի 11 (24-ի) առավոտյան ժամը 6-ին դադարեց բաբախելուց բոցաշունչ բոլշևիկի՝ Սուրեն Սպանդարյանի—Տիմոֆեյի սիրտը։

Սուրեն Սպանդարյանի մահը մեծ կորուստ էր պարտիայի և բանվոր դասակարգի համար։ Վ. Ի. Լենինը ստանալով նրա մահվան լուրը, պարտիայի կենտրոնական օրգան „Социал-Демократ"-ում գետեղեց հատուկ նեկրոլոգ նրա հիշատակին։ Սպանդարյանի մահը ծանր վիշտ պատճառեց ընկեր Ստալինին, որը մինչև վերջին րոպեն հետաքրքրվում էր իր ընկերոջ և գինակցի առողջությամբ ու կյանքով։ Սպանդարյանի մահվան լուրն առնելով

---

[1] Վ. Շվեյցեր, Ստալինը Տուրուխանի աքսորավայրում, Երևան, 1941։

ընկեր Ստալինը մի հուզիչ նամակ է գրում Վ. Շվեյցերին, որտեղ ասված էր. «Սուրենին մենք չենք մոռանա—միք վհատվեք», «աշխատեցեք ռևոլուցիայի համար այնպես, ինչպես աշխատել էր Սուրենը»[1]։

Վ. Ավետիսյանի այս ուշագրավ աշխատությունը կարդացվում է լարված հետաքրքրությամբ։ Հեղինակը կարողացել է մարքսիստ պատմաբանին հատուկ ճշմարտացիությամբ վերակենդանացնել Սուրեն Սպանդարյանի՝ լենինյան-ստալինյան հին գվարդիայի լավագույն ներկայացուցիչներից մեկի անմահ կերպարը, որի համար պարտիայի և ռևոլուցիայի շահը բարձր էր ամեն բանից։ Սուրեն Սպանդարյանի խիզախությունը, անվեհերությունը և դրանց հետ միասին թեորիական խոր ու բազմակողմանի պատրաստությունը, հրապարակախոսի սուր լեզուն և գրիչը ահ ու սարսափ էին ազդում ցարական ադմինիստրացիային, կապիտալիստներին, բուրժուական նացիոնալիստներին ու մենշևիկներին։ Նրա համար կար միայն մեկ սկզբունք՝ լենինյան-ստալինյան սկզբունքը՝ ամեն ինչ ենթարկել պրոլետարիատի ազատագրման, սոցիալիզմի հաղթանակի գերագույն շահին։

Ահա ինչու, Սուրեն Սպանդարյանի կյանքն ու ռևոլուցիոն գործունեությունը այսօր կոմունիզմ կառուցող աշխատավորության համար մեծ ու ոգեշնչող օրինակ է։

Վ. Ավետիսյանը գրքի վերջում կցել է մի հավելված, որը պարունակում է Սուրեն Սպանդարյանի կյանքի ու գործունեության գլխավոր տարեթվերը։

Հայպետհրատը շնորհակալ գործ է կատարել, հրատարակելով Վ. Ավետիսյանի «Սուրեն Սպանդարյան» արժեքավոր և ուշագրավ աշխատությունը։

Վ. ՔԱԼԱՇՅԱՆ

---

[1] Վ. Շվեյցեր, Ստալինը Ցուրուխանի աքսորավայրում, էջ 49։